



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Medi-Cal-ի կառավարվող ինսամք՝ «Ինսամքի շարունակելիություն»

Փետրվար, 2017թ., հրապ. #5545.10

Եթե Դուք սովորական Medi-Cal¹ ունեք, և այժմ Ձեզ ասվում է, որ Դուք պետք է անդամագրվեք Medi-Cal կառավարվող ինսամքի ծրագրում (MCP, Managed Care Plan),² Դուք կկարողանաք շարունակել այցելել Ձեր սովորական Medi-Cal-ի առողջապահական ինսամքի մատակարարին: Սա այն է, ինչ նշանակում է «ինսամքի շարունակելիություն»:

1. Սա վերաբերո՞ւմ է իմ ներկայիս առողջապահական ինսամքի որևէ մատակարարի:

Դա կախված է տարբեր հանգամանքներից: Medi-Cal-ի կանոնների համաձայն, միայն եթե Ձեր առողջապահական ինսամքի մատակարարը՝

¹ Սովորական Medi-Cal-ը նաև հայտնի է որպես Վճարում ծառայությունների դիմաց (FFS, Fee-For-Service) Medi-Cal: Երբ Դուք սովորական Medi-Cal ունեք Ձեր բոլոր բժշկական ծառայությունների համար, Դուք MCP-ում չեք: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

² MCP-ները առողջապահական ծրագրեր են, որոնք ինսամքի վտանգ են ենթադրում՝ ուղղակիորեն նրանց մատակարարների ցանցից կամ որպես հովանոց այն բժշկական խմբերի համար, որոնք իրենց սեփական ցանցը կամ երկուսն էլ ունեն: 42 CFR § 438.2 Անդամներն ընտրում են առաջնային ինսամքի մատակարար (PCP, Primary Care Physician), ում սովորաբար նրանք առաջինը պետք է այցելեն: Մեկ բացառություն. Ընտանիքի պլանավորման և դրան առնչվող ծառայությունների դեպքում անդամները կարող են այցելել Medi-Cal-ի ցանցում եղող կամ ցանցից դուրս մատակարարի: 42 USC § 1396d(a)(4)(c). APL 16-003 (12-23-2016): PCP-ն կարող է բուժել կամ անդամներին ուղղորդել ցանցում առկա մասնագետի կամ երբեմն ցանցից դուրս մասնագետի: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

- Medi-Cal-ի սովորական բժիշկ կամ մանկաբարձուհի է, ում Դուք այցելել եք վերջին 12 ամսվա ընթացքում. և
- Համաձայն է աշխատել MCP-ի հետ և ընդունել MCP-ի վճարումը կամ սովորական Medi-Cal-ի արժեքը, որն ավելի բարձր է. և
- Խնամքին առնչվող հարցերում որակագրկում չունի:

Բարեկեցության և հաստատությունների օրենսգիրք § 14182(b)(13): Ի հավելումս Medi-Cal-ի ներքո առկա խնամքի շարունակելիության պաշտպանության միջոցների, Նախահանգային օրենքը, որը կիրառվում է Կառավարվող առողջապահական խնամքի վարչության (DMHC, Department of Managed Health Care) կողմից, նույնպես խնամքի շարունակելիության պաշտպանության միջոցներ է տրամադրում³ MCP-ի այն անդամների համար, ում արտոնագրում է, այդ թվում՝ Medi-Cal անդամներին: Այն MCP-ներին չի արտոնագրում Վարչաշրջանի կազմակերպված առողջապահական համակարգերում (COHS, County Organized Health Systems) բացի COHS-ի Սան Մատեոյի առողջապահական ծրագրի (San Mateo Health ⁴ Plan): DMHC-ն լիազորում է մնացած բոլոր MCP-ներին, որոնք ծառայում են Medi-Cal-ի նպաստառուներին: DMHC –ի կողմից իրականացվող խնամքի շարունակելիության նահանգային օրենքը անդամներին

³ Նահանգային օրենքով խնամքի շարունակելիության պաշտպանության միջոցները սահմանված են Առողջապահության և ապահովության օրենսգրքի 1373.96 հոդվածում, որը «Knox-Keene» առողջապահական խնամքի ծառայության ծրագրի օրենքի մաս է կազմում: «Knox-Keene»-ն ընդգրկում է առողջապահական խնամքի առևտրային ծրագրերի մեծ մասը: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁴ COHS-ի հետևյալ վարչաշրջանները և ծրագրերը չեն ենթարկվում «Knox-Keene» խնամքի շարունակելիության պաշտպանության միջոցներին՝ CalOptima (Orange). Կենտրոնական Կալիֆորնիայի առողջապահական դաշինք (Merced, Monterey, Santa Cruz. CenCal Health (San Luis Obispo, Santa Barbara). Առողջապահական համագործակցության ծրագիր (Del Norte, Humboldt, Lake, Lassen, Marin, Mendocino, Modoc, Napa, Shasta, Siskiyou, Solano, Sonoma, Trinity, Yolo): Gold Coast Առողջապահական ծրագիր (Ventura): ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

հնարավորություն է տալիս օգտվել լիազորված մատակարարներից.⁵ Medi-Cal-ի խնամքի շարունակելիությունից օգտվելու պաշտպանիչ միջոցները վերաբերում են բժիշկներին և մանկաբարձուհիներին, բայց չեն տարածվում կապակցված օժանդակ ծառայությունների վրա, ինչպիսիք են լաբորատորիայի և պատկերման ծառայությունները, ինչպես օրինակ՝ ուլտրաձայնային ստուգումը, մամոգրաֆիան, Չամակարգչային տոմոգրաֆիայի (CT) և Պոզիտրոն-Էմիսիոն տոմոգրաֆիայի (PET) սկանավորումները: Դա նշանակում է, որ COHS վարչաշրջանները (բացի Սան Մատեոն) կարող են մերժել խնամք տրամադրող բժշկի ծառայությունների շարունակելիությունը՝ միևնույն մատակարարի ներկայիս և նախկին ստուգումների արդյունքները համեմատելով:⁶

2. Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի կարողանամ շարունակել այցելել իմ առողջապահական խնամքի մատակարարին:

Դուք պետք է դիմեք Ձեր MCP և տեղեկացնեք, որ սա այն է, ինչը Դուք ցանկանում եք անել: Ձեր MCP-ին տրամադրեք Ձեր առողջապահական խնամքի մատակարարի կոնտակտային տվյալները, որպեսզի նա կարողանա կապ հաստատել մատակարարի հետ: Կարևոր է Ձեր առողջապահական խնամքի մատակարարին և նրա ընդունարանին տեղյակ պահել, որ Դուք խնդրել եք թույլ տալ շարունակել այցելել այդ

⁵ Այն մատակարարը, որն Առողջապահության և ապահովության օրենսգրքի 1345(i) հոդվածում սահմանվում է որպես «ցանկացած արհեստավարժ անձ, ծրագիր, առողջապահական հաստատություն կամ այլ անձ կամ հաստատություն, որն արտոնագրված է նահանգի կողմից՝ առողջապահական խնամքի ծառայություններ տրամադրելու համար»: Առողջապահության և ապահովության օրենսգրքը, հոդված 1373.96(m)(3): ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁶ 2014թ. դեկտեմբերի 3-ից DHCS-ը պատասխանում է Շահագրգիռ կողմերի խորհրդակցական հանձնաժողովի (Stakeholder Advisory Committee) հետստուգման հարցերին՝ համաձայն 2014թ. սեպտեմբերի 11-ին հանձնաժողովի հանդիպման որոշման. Հիմնվելով «Dual Plan Letter 14-004»-ի վրա, լրացուցիչ ծառայությունները, որոնք ներառում են լաբորատոր աշխատանք կամ պատկերում, որոնք իրավունակ չեն խնամքի շարունակելիության համար:

[http://www.dhcs.ca.gov/Documents/DHCS_SAC_9-](http://www.dhcs.ca.gov/Documents/DHCS_SAC_9-11_Followup_Responses.pdf)

[11_Followup_Responses.pdf](http://www.dhcs.ca.gov/Documents/DHCS_SAC_9-11_Followup_Responses.pdf) Էջ 6-ում: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

մատակարարին, ինչը խնամքի շարունակելիության պաշտպանության համաձայն Ձեր իրավունքն է: Մատակարարին տեղեկացրեք, որ MCP-ն կապ կհաստատի մատակարարի հետ, և որ վճարման չափը սովորական Medi-Cal-ի կամ MCP վճարման չափի հետ նույնը կլինի, եթե ավելի բարձր է: Ընդունարանի աշխատակցին տեղեկացրեք, որ Դուք կհետևեք՝ պարզելու, թե արդյոք մատակարարը կապ հաստատել է MCP-ի հետ, որպեսզի Դուք կարողանաք ուղղակիորեն կապվել MCP-ի հետ, եթե մատակարարը MCP-ից տեղեկատվություն չի ստացել: Ճիշտ նախքան կառավարվող խնամքի անցնելը, համոզվեք, որ Դուք վերալրացրել եք Ձեր դեղատոմսերը:

3. Իմ MCP-ից պատասխան ստանալը որքա՞ն կտևի:

Ձեր MCP-ն մինչև 30 օրացուցային օր ունի՝ սկսած այն պահից, երբ նա ստանում է Ձեր խնդրանքը՝ Ձեզ տեղեկացնելու, թե արդյոք Դուք կարող եք շարունակել այցելել Ձեր առողջապահական խնամքի մատակարարին: Դուք կարող եք Ձեր խնդրանքը ներկայացնել հեռախոսով:⁷ Եթե կարիք ունեք այցելել Ձեր խնամքի շարունակելիության մատակարարին, որովհետև դա հրատապ է կամ առկախ պայմանավորվածություն ունեք, Ձեր MCP-ին տեղեկացրեք այդ մասին: MCP-ն պատասխանատու է երաշխավորել, որ Դուք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ եք ստանում, մինչ որոշման եք սպասում: Գրի առեք բոլոր այն անձանց անունները և հեռախոսահամարներն, ում հետ խոսում եք: Գրի առեք, թե ինչ խոսեցիք:

4. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես փոխվեմ մեկ այլ MCP-ի՝ նախքան շարունակական խնամքի ժամանակաշրջանի ավարտը:

Երբ Դուք փոխվեք նոր MCP ծրագրի, «խնամքի շարունակելիության 12-ամսյա ժամանակահատվածը կարող է կրկին վերսկսել: Բայց եթե

⁷ DHCS APL 15-019՝ Էջ 2: «պետք է խնամքի շարունակելիության խնդրանքներ ընդունի հեռախոսով... չպետք է հայցողից խնդրի թղթի վրա կամ համակրգչային ձևաթուղթ լրացնել և ներկայացնել...»:
[\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Էջ 5՝ 16-ից

Դուք կրկին փոխեք, ապա նոր 12-ամսյա ժամանակաշրջան չի տրամադրվի Ձեզ:⁸

- 5. Արդյո՞ք այն բժիշկը, ում ես այցելում եմ սովորական Medi-Cal-ի շրջանակներում, կվճարվի տրամադրած ծառայությունների համար, երբ ես անցնեմ MCP, բայց նախքան ես կխնդրեմ MCP-ից շարունակել այցելել նրան: Ի՞նչ տեղի կունենա, եթե ես այցելեմ այդ բժշկին խնդրելուց հետո, բայց նախքան MCP-ից դրական պատասխան ստանալը:**

Պատասխանը դրական է այն ծառայությունների համար, որոնք տրամադրվել են նախքան Դուք MCP-ին կխնդրեիք Ձեր սովորական Medi-Cal բժշկին որակավորել որպես ինսամքի շարունակելիության բժշկի, և պատասխանը դրական է այն ծառայությունների համար, որոնք տրամադրվել են, նախքան Դուք MCP-ից հաստատում կստանալիք:⁹ Ծառայությունների համար կարող են վճարումներ չլինել, մինչև որ բժիշկը կամ որևէ մատակարար գրանցվեն որպես Ձեր ինսամքի շարունակելիության բժիշկ: Ինսամքի շարունակելիությունն իրավունք է և կարող է մերժվել, միայն եթե ինսամքի որակին առնչվող խնդիրներ կան, որոնք կհանգարեն բժշկին MCP այլ անդամների ծառայություններ տրամադրել:¹⁰ Դուք կարող եք ինսամքի շարունակելիության բազմաթիվ մատակարարներ ունենալ:

- 6. Ի՞նչ կասեք ինսամքի շարունակելիության մասին, եթե ինձնից պահանջվում է Covered California ծրագրից փոխադրվել Medi-Cal-ի կառավարվող ինսամքի ծրագիր:**

⁸ APL 15-019, Էջ 2. DPL 15-003, Էջ 3. Ավելի վաղ 2014թ. DHCS ՅՏՅ և Q&A 4-ում նշվում է միայն մեկ 12-ամսյա ժամանակաշրջան:
[\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁹ DHCS APL համարը 15-019, Էջ 2-3՝ «MCP-ի գործընթացների» վերնագրի ներքո [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁰ DHCS APL համարը 15-019, Էջ՝ 2, 3. [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Խնամքի շարունակելիության Ձեր իրավունքները նույնն են, ինչ որ Ձեր սովորական Medi-Cal-ից կառավարվող խնամքի փոխվելու Ձեր իրավունքները:¹¹

7. Ի՞նչ տեղի կունենա, եթե այն մասնագետը, ում ես ցանկանում եմ շարունակել այցելել իմ MCP-ում է, բայց իմ առաջնային խնամքի բժիշկների խմբի ցանցում չէ կամ գրանցվել է առողջապահական ծրագրում միայն որոշակի թվով հիվանդների ստուգելու համար, իսկ այդ տեղերն արդեն վերցված են:

Ձեր խնամքի շարունակելիությանը վերաբերող իրավունքները կիրառվում են, որովհետև Ձեզ համար այդ մասնագետը համարվում է ցանցից դուրս: Որոշակի մասնացետի երկարաժամկետ այցելելու համար պարզեք, թե արդյոք կա՞ առաջնային խնամքի մեկ այլ մասնագետ, որին Դուք կարող եք այցելել, որպեսզի այդ մասնագետը դառնա «ցանցում առկա»: Եթե Դուք երկու ծրագրով վարչաշրջանում եք, որտեղ գոյություն ունի տեղական ծրագիր և առևտրային ծրագիր,¹² հարցրեք, թե արդյոք Դուք կարող եք ծառայություններն ուղղակիորեն ստանալ տեղական նախաձեռնող ծրագրից, այլ ոչ թե բժշկական խմբի միջոցով, եթե դա նշանակում է, որ Դուք կկարողանաք ցանցի միջոցով օգտվել Ձեր մասնագետի ծառայություններից:

8. Որո՞նք են խնամքի շարունակելիության իմ իրավունքները, եթե ես փոխադրվում եմ Medi-Cal MCP՝ իմ ծնողների առողջապահական ծրագրից դուրս գալուց հետո:

Դուք *Medi-Cal-ի* խնամքի շարունակելիության ոչ մի իրավունք չեք ունենա, բայց կարող եք իրավունքներ ունենալ «Knox-Keene Act»-ի ներքո: Բացի այդ, նահանգային օրենքի պաշտպանության միջոցների ներքո, Դուք կարող եք շարունակել իրավունակ լինել նպաստների

¹¹ DHCS APL 15-019՝ Էջ 5. ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹² Երկու ծրագրով վարչաշրջանները, որոնք տեղական նախաձեռնությունն ունեն՝ Alameda, Contra Costa, Fresno, Kern, Kings, Los Angeles, Madera, Riverside, San Bernardino, San Francisco, San Joaquin, Santa Clara, Stanislaus և Tulare: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

համար` Ձեր ծնողների առողջապահական ծրագրի ներքո ` մինչև 26 տարեկան դառնալը (կամ որը սահմանային տարիք կհամարվի)` շարունակվող հաշմանդամության վրա հիմնված:¹³

9. Որո՞նք են իմ խնամքի շարունակելիության իրավունքները, եթե ես մեկ MCP-ից մեկ այլի փոխադրվեմ և ցանկանամ շարունակել ծառայությունները առաջին MCP-ի մատակարարի հետ:

Խնամքի շարունակելիության կանոնները կիրառվում են, ուստի Դուք կարող եք շարունակել այցելել առաջին MCP-ի մատակարարին:

10. Ի՞նչ տեղի կունենա, երբ ես փոխադրվեմ MCP, եթե ես ներկայումս ծառայություններ եմ ստանում, որոնք լիազորված են սովորական Medi-Cal-ի կողմից:

MCP-ից պահանջվում է ցանկացած ընթացիկ հաստատված բուժման լիազորության խնդրանքին ընթացք տալ` մինչև 60 օր կամ երբ նոր գնահատում առկա լինի:¹⁴ Բացի այդ, Medi-Cal-ի կանոնակարգերն սահմանում են, որ կամ խնամքի շարունակելիության մատակարարը կամ MCP-ի նոր մատակարարը կարող են լիազորում խնդրել MCP-ի միջոցով` ծառայությունների շարունակելիության համար, որոնք նախապես լիազորվել են սովորական Medi-Cal-ի ներքո: Սա կոչվում է վերալիազորման խնդրանք: Եթե մերժի կամ նվազեցնի վերալիազորման խնդրանքը, ժամանակին կատարված բողոքարկումը Medi-Cal-ի նպաստառուին իրավունք կտա ծառայությունից շարունակել օգտվել որպես վճարվող օգնություն, որը չլուծված արդար լսում է

¹³ «Knox-Keene»-ի համաձայն, Առողջապահության և ապահովության օրենսգրքի 1373(d) հոդված. CalPERS-ի համաձայն` <https://www.calpers.ca.gov/docs/forms-publications/state-health-guide.pdf>; Ապահովագրության Օրենսգիրք, 10277 և 10278 հոդվածներ: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁴ DHCS APL 15-019` Էջ 6. ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Էջ 8՝ 16-ից

համարվում:¹⁵

11. Իմ ընթացիկ դեղամիջոցներն ինչպե՞ս կապահովագրվեն ինամքի շարունակելիության ներքո:

Նահանգային օրենքը կօգնի Ձեզ շարունակել դեղատոմսով նշանակված դեղերն ստանալ: Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք, հոդված 14185.

(1) Ոչ մի ինդիր դեղերի կամ MCP-ի դեղագիտական տեղեկատույում առկա դեղերի նոր դեղատոմսերի շարունակական լիազորման համար:¹⁶

(2) Եթե բրենդային անվանումով դեղ է նշանակվել, որն առանց բրենդային անվանման (ջեներիկ) տարբերակ չունի¹⁷ և «որը դեղատոմսով նշանակված բուժման մաս է կազմում՝ սկսած ... անմիջապես նախքան ...անդամագրումը», կշարունակվի, մինչև որ

¹⁵ 22 CCR §§ 51003(c)(1)-ում DHCS-ի կանոնակարգումները (Բուժման Լիազորման ինդրանքի կամ TAR-ի նախապես հաստատված վերալիազորման ինդրանք), 51014.1(e) (վերալիազորման ինդրանքի մերժում կամ կրճատում, որը համարվել է ծառայությունների դադարեցում) 51014.2(a) (երբ իրավունք ունի շարունակվող բժշկական աջակցության, որի լսումն առկա է), 51014.2(d) (շարունակվող բժշկական աջակցության լիազորություն, որի լսումն առկա է) [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁶ Այն դեղերը, որոնք դեղագիտական տեղեկատուի մեջ չկան և նախապես լիազորություն են պահանջում, ներառում են այն դեղերը, որոնց համար արտադրողը չի համաձայնել գերավճարի վերադարձ ստանալ՝ գինը նվազեցնելու համար, այն դեղերը, որոնք թանկ են, այն դեղերը, որոնք վտանգ են ներկայացնում, որոնք պետք է գնահատվեն նախկին լիազորությամբ կամ լիազորվեն որպես աստիճանական բուժման մի մաս, և այն դեղերը, որոնց արդյունավետության կամ ապահովության առումով մտահոգություններ կան: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁷ Սա մեկ աղբյուրով դեղի սահմանումն է: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Էջ 9՝ 16-ից

այլևս դեղատոմսով չնշանակվի իսկամքի շարունակելիության կամ ծրագրի բժշկի կողմից:¹⁸

(3) Այն դեղատոմսերի համար, որոնք ներառում են բրենդային անվանումով դեղեր ջեներիկների հետ, ¹⁹ որոնք MCP-ի դեղագիտական տեղեկատուի մեջ առկա չեն, DHCS-ի որոշումով է, որ նախկին լիազորությունը՝ բժշկական հաստատման հետ միասին, պետք է տրամադրվի:²⁰

Երբ դեղատոմսով նշանակումը նախնական լիզորություն է պահանջում, MCP հաստատումը պետք է կատարվի 24 ժամվա կամ մեկ աշխատանքային օրվա ընթացքում. Երբ դեղագործը որոշի, որ անհապաղ կարիք կա, 72 ժամվա համար անհրաժեշտ դեղամիջոցներ կտրամադրվեն Medi-Cal-ի նպաստառուին: ²¹

Բացի այդ, Medi-Cal-ի կանոնակարգերի համաձայն, որոնք հիշատակվեցին վերոնշյալ Q&A 10-ում, Medi-Cal-ի կողմից նախկինում լիազորված դեղերի շարունակության համար ներակյացված վերալիազորման ինտերանքի մերժումն արդար լսման որոշմամբ առկախված դեղամիջոցների շարունակական օգտագործման իրավունք է առաջ բերում, եթե մերժումը ժամանակին բողոքարկվի:

¹⁸ Բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգիրք 14185(b) հոդված: *Տե՛ս նաև*՝ DHCS 2014թ. «Իսկամքի շարունակելիությանը վերաբերող ՋՏՅ» Q&A 15 #2. ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁹ Սա «բազմաթիվ աղբյուրներով դեղի» սահմանումն է: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁰ DHCS 2014թ. Իսկամքի շարունակելիությանը վերաբերող ՋՏՅ #3: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²¹ Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք, 14185(a) հոդված. 42 1396r-8(d)(5). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

12. Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ Բժշկական բացառման խնդրանքը ((Medical Exemption Request (MER)), որը պետք է մնա սովորական Medi-Cal-ում մերժվի և ես հայտնվեմ կառավարվող խնամքում: Ի՞նչ կասեք իմ խնամքի շարունակելիության իրավունքերի մասին:

DHCS-ի Medi-Cal-ի կառավարվող խնամք՝ բաժինը (MMCD, Medi-Cal Managed Care Division) բոլոր ծրագրերի նամակում (All-Plan Letter) 15-001 (13 հունվարի, 2015թ.) ուղղորդում է MCP-ին՝ MER-ը նաև համարելու խնամքի շարունակելիության խնդրանք և կապվելու Ձեզ հետ: Սակայն մենք խորհուրդ ենք տալիս Ձեզ չսպասել, որպեսզի MCP-ն կապվի Ձեզ հետ, այլ Դուք կապվեք MCP-ի հետ, ինչպես բացատրվեց վերևում:

13. Եթե իմ MCP-ը պատասխանի «այո», ապա որքա՞ն ժամանակ ես կկարողանամ այցելել իմ առողջապահական խնամքի մատակարարին:

Սովորաբար մինչև 12 ամիս: Սա կոչվում է «խնամքի շարունակելիության երկարաձգված ժամանակահատված»: Հնարավոր է, որ Ձեր MCP-ը համաձայնի՝ Ձեզ թույլ տալ ավելի քան 12 ամիս այցելել Ձեր առողջապահական խնամքի մատակարարին: Դուք պետք է հարցնեք Ձեր MCP-ին: Ձեր առաջնային խնամքի մատակարարին խնդրեք Ձեզ աջակցել Ձեր այս խնդրանքի հարցում: Ստորև տե՛ս Q&A 14-ը:

14. Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ MCP-ն «ոչ» պատասխանի խնամքի շարունակելիության իմ խնդրանքին կամ հաշվի չառնի իմ խնդրանքը:

Բողոք ներկայացրեք

Դուք կարող եք Ձեր MCP-ին ցանկացած պահի բողոք ներկայացնել: Ձեր MCP-ից հարցրեք, թե ինչպես պետք է դա անեք: Եթե Ձեր խնդիրը հրատապ է (լուրջ վտանգ Ձեր առողջությանը), ապա Ձեր MCP-ն պետք է Ձեզ 3 օրվա ընթացքում որոշում տրամադրի: Եթե Ձեր խնդիրը հրատապ չէ, ապա Ձեր MCP-ն 30 օր ժամանակ ունի՝ Ձեզ որոշում տրամադրելու համար:

Կառավարվող առողջապահական խնամքի վարչությունից օգնություն խնդրեք:

MCP շատ ծրագրերի ներքո Դուք կարող եք գանգատ ներկայացնել Կառավարվող առողջապահական խնամքի վարչությանը (DMHC, Department of Managed Health Care)՝ (888) 466-2219

հեռախոսահամարով կամ TDD` (877) 688-9891 համարով, եթե Դուք գոհ չեք Ձեր MCP-ի կայացրած որոշումից կամ հրատապ խնդրի համար 3 օրվա կամ ոչ հրատապ խնդրի համար 15-ից 30 օրվա ընթացքում որոշում չեք ստացել: Երբ MCP-ի դեմ գանգատ եք ներկայացնում, DMHC-ին տեղյակ պահեք, որովհետև MCP-ին բողոք կամ գանգատ ներկայացնելը պահանջվում է՝ նախքան Դուք կկարողանաք DMHC-ին գանգատ ներկայացնել: Վերոնշյալ հեռախոսահամարն այն տեղն է, որտեղ Դուք պետք է գանգահարեք, եթե որևէ հարց ունեք Ձեր այն իրավունքների հարցով, որոնք պաշտպանվում են DMHC-ի կողմից: Նաև տե՛ս՝ <https://www.dmhc.ca.gov/FileaComplaint.aspx#.WBJ8JY3FA3E>

Սակայն DMHC գնալն ընտրանք չէ COHS վարչաշրջաններում, բացի Սան Մատեոյի վարչաշրջանից, որովհետև COHS-ի MCP-ներից չի պահանջվել DMHC-ի կողմից արտոնագրվել

Այլ ընտրանքներ

Չնարավոր է, որ Դուք նաև ցանկանաք դիտարկել այլ ընտրանքներ, ինչպիսին է Բժշկական բացառում խնդրելը, որը Դուք կարող եք կատարել, նախքան կրնոգրկվեք կառավարվող խնամքում կամ անդամագրման առաջին 90 օրվա ընթացքում: Բժշկական բացառման խնդրանքների (MERs, Medical Exemption Requests) վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս մեր հրապարակումները՝ <https://www.disabilityrightsca.org/publications/medi-cal-managed-care-health-plans-what-are-they-what-do-i-need-to-know-about-them> կամ գանգահարեք մեզ՝ 1 800 776-5746 հեռախոսահամարով, որպեսզի մենք Ձեզ ուղարկենք այս հրապարակումը: Բժշկական բացառման խնդրանքը COHS վարչաշրջաններում ընտրանք չէ: ²²

²² 22 վարչաշրջանները, որտեղ կառավարվող խնամքը տրամադրվում է Վարչաշրջանի կողմից իրականացվող առողջապահական համակարգի (CHOS, County Operated Health System) ծրագրի միջոցով, CalOptima (Orange) են. CenCal Health (San Luis Obispo, Santa Barbara). Կենտրոնական Կալիֆորնիայի առողջապահական դաշինք Merced, Monterey, Santa Cruz. Gold Coast առողջապահական ծրագիր Ventura. Առողջապահական համագործակցության ծրագիր (Del Norte, Humboldt, Lake, Lassen, Marin, Mendocino, Modoc, Napa, Shasta, Siskiyou, Solano, Sonoma, Trinity, Yolo): Սան Մատեոյի առողջապահական ծրագիր (San Mateo). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Մեկ այլ ընտրանքն այն մարդկանց համար, ովքեր COHS վարչաշրջանում չեն, դուրս գրվելն է Medi-Cal-ի կառավարվող խնամքից, եթե Դուք այնպիսի դասակարգման մեջ եք, որ արտոնություն ունեք այդպես անելու, ինչպիսին է օրինակ երկակի իրավունակությունը (որը և՛ Medi-Cal-ից և՛ Medicare-ից օգտվելու իրավունակությունն է) կամ այլ առողջապահական ապահովագրություն կամ Medi-Cal-ի ծախսի մասնաբաժին ունենալը: IHSS-ի ավարտվելուց հետո Medi-Cal-ի անձնական խնամքի ծառայությունները, որոնք CCI ծրագրի մաս են կազմում և ակնկալվում են 2017թ. հուլիսի 1-ից սկսած, CCI վարչաշրջաններում երկակի իրավունակություն չի պահանջվի՝ կառավարվող խնամքում անդամագրվելու համար՝ որպես Medi-Cal-ի անձնական խնամքի ծառայություններ (IHSS) ստանալու պայման: Սակայն, դա վերաբերում է CCI վարչաշրջաններին, այլ ոչ թե այլ վարչաշրջաններին: Medi-Cal նպաստառուներից, այդ թվում երկակի իրավունակներից, երկարաժամկետ խնամքի հաստատություններում (այսինքն ծերանոցներում) կպահանջվի անդամագրվել Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրում: Բոլոր վարչաշրջաններում Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրում անդամագրվելը պահանջվում է՝ համայնքում հիմնված տարեցների ծառայություններ (CBAS, Community-Based Adult Services) ստանալու համար, որը նախկինում կոչվում էր տարեցների առողջապահական խնամք: Եթե Դուք ծառայություններ եք ստանում Տան և համայնքում հիմնված հրաժարումից, որն իրականացվում է DHCS-ի Տնային գործառույթներից, Ձեր անդամագրումը կառավարվող խնամքին կամընտրական է, նույնիսկ

Եթե Medi-Cal-ի նպաստառուն Medi-Cal անձնական խնամքի կարիք ունի:²³

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք DHCS-ի Medi-Cal-ի կառավարվող խնամքի կայքէջ՝ <http://www.dhcs.ca.gov/services/Pages/Medi-CalManagedCare.aspx>: Իսկ հետո սեղմեք «աջակցության գաղտնագրի աղյուսակ» ընտրանքին «Ռեսուրսներ և տեղեկություններ» բաժնի ներքո: Եթե Դուք երկակի իրավունակ եք, Դուք կկարողանաք շարունակել այցելել Ձեր Medicare-ի վճարվող բժշկին նույնիսկ եթե Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրում եք:

²³ Եթե Դուք երկակի իրավունակ լինեիք Los Angeles, Orange, Riverside, San Bernardino, San Diego, San Mateo կամ Santa Clara վարչաշրջաններում, ապա այն վարչաշրջանները, որոնք մասնակցում էին Կալիֆորնիայի համակարգված խնամքի նախաձեռնությանը (CCI, [California] Coordinated Care Initiative), համաձայն առկա փաստաթղթի, Medi-Cal-ի կառավարվող խնամքի համակարգում անդամագրվելու կարիք ունեին, որը համարվում էր միակ ձևը՝ օգտվելու անձնական խնամքի ծառայություններից (IHSS)՝ լիազորված վարչաշրջանի կողմից, նաև նշանակում էր, որ կառավարվող խնամքին անդամագրվելն այլևս կամընտրական չէր, այլ՝ պարտադիր Medi-Cal-ի այն նպաստառուների համար, ովքեր ծառայություններ էին ստանում NF/AH հրաժարման ներքո, որը նույնպես վարչաշրջանի կողմից լիազորված IHSS/Medi-Cal անձնական խնամքի կարիք ուներ: Սակայն, CCI ծրագրի IHSS հատվածն ավարտվում է 2017թ. հուլիսի 1-ին: Ի հակադրություն այն մեկնաբանմանը, որ Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրում ներառվելը պարտադիր էր այն հրաժարված նպաստառուների համար, որոնք IHSS-ի կարիք ունեին, հետևյալն են՝ (i) ծերանոցների/ սուր առողջական խնդիրների հիվանդանոցների, տանը և համայնքում հիմնված ծառայությունների հրաժարման տրամադրման լեզուն (ii) նահանգային երկու ծրագրով կանոնակարգերը՝ 22 CCR հոդված 53887(a)(2)(A).8., որոնցով բացառվում է հրաժարվող մասնակցիների պարտադիր անդամագրումը: Առկա HCBS հրաժարման համար տե՛ս 1.G.-ի դիմումը էջ 3-ում և հավելված 1.3.iii.-ը էջ 268. Ընթացիկ, երկարաձգված հրաժարում 1.G. հավելվածում, էջ 6, որտեղ նշվում է, որ թիվ 1115 հրաժարման ֆինանսական միջոցները պետք է հաշվարկվեն հրաժարման բյուջեի համեմատ: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

**15. Ի՞նչ տեղի կունենա, եթե MCP-ն մերժի իմ խնդրանքը՝
շարունակելու իմ շարունակելիության խնամքի
մատակարարին այցելել, երբ շարունակելիության խնամքի
ժամանակաշրջանն ավարտվի:**

Շարունակելիության խնամքից դուրս ցանցից դուրս մատակարարի այցելելը շարունակելը սովորաբար պահանջում է ցույց տալ, որ ցանցում փորձառու և մասնագիտացված մատակարար չկա, որպեսզի հետևի առողջապահական խնամքի Ձեր կարիքներին:

Կառավարվող խնամքի դաշնային կանոնակարգերն իրավունք են տալիս որևէ պատճառով ցանկացած պահի դուրս գալ կառավարվող խնամքի անդամությունից: 42 C.F.R. § 438.56. Անդամությունից դուրս գալու իրավունքը վերաբերում է Medi-Cal-ի կառավարվող խնամքի բոլոր ծրագրերին, այդ թվում՝ COHS MCP-ներին: «Պատճառը» ներառում է «անդամի խնամքի կարիքներով զբաղվող փորձառու մատակարարներից օգտվելու պակաս», որը կարող է վերաբերել այն անձանց, ովքեր շատ բարդ կամ հազվադեպ հիվանդություններ կամ առողջական խնդիրներ ունեն: 42 C.F.R. § 438.56(c)(2)(v):²⁴ MCP-ի՝ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ցանցից դուրս խնամքի լիազորումը անդամությունից դուրս գալու այլընտրանք է:

Կամ դիմեք Առողջապահական խնամքի ընտրանքներ ծրագրին (Health Care Options)՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով:

²⁴ MCP-ի խնամքի մատակարարից օգտվելու շարունակելիության ապահովման համար շարունակելի օգտագործման լիազորում խնդրելու պատճառներից մեկը կարող է լինել այն, որ ցանցային մատակարար չլինի, ով Ձեր խնամքի կարիքներով զբաղվող կլինիկական փորձ կունենա: Եթե MCP-ն մերժի ցանցից դուրս մատակարարի Ձեր խնդրանքը, Դուք կարող եք բողոք ներկայացնել: Եթե բողոքը մերժվի, Դուք կարող եք անդամությունից դուրս գալու խնդրանք ներկայացնել և՛ MCP-ին և՛ Առողջապահական խնամքի ծառայությունների վարչության Medi-Cal-ի կառավարվող խնամքի բաժնին: Անդամությունից դուրս գալու այլ հիմքերը ներառում են «խնամքի վատ որակը, պայմանագրի ներքո ապահովագրվող ծառայություններից օգտվելու բացակայություն, որը կարող է ներառել պայմանավորվածություն ձեռք բերելու կամ ծառայություններից օգտվելու անհիմն հետաձգումներ: 42 CFR § 438.56(d)(2)(v): [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Էջ 15` 16-ից

16. Այլ տեղեկություններ

Տե՛ս Առողջապահական ինսամքի ծառայությունների վարչության (DHCS, Department of Health Care Services) - «ALL PLAN LETTER» 15-019-ը հետևյալ հղմամբ՝

<http://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2015/APL15-019.pdf>

Անցում կատարեք այստեղ հետևյալի համար՝

Տեղեկատվություն, որը տրամադրվում է Medi-Cal-ի կառավարվող ինսամքի բաժնի՝ MMCD-ի կողմից.

<http://www.dhcs.ca.gov/services/Pages/EPSDT.aspx>

«All Plan Letters»-ի (APL), «Duals Plan Letters»-ի (DPL) և «Policy Letters»-ի պատճենները (PL)՝

<http://www.dhcs.ca.gov/services/Pages/EPSDT.aspx>

«Ինսամքի շարունակելիությունը Medi-Cal-ի կառավարվող ինսամքում, Ազգային առողջապահական օրենքի ծրագրում (Managed Care, National Health Law Program)՝ <https://healthlaw.org/resource/continuity-of-care-in-medi-cal/>

Հաճախակի տրվող հարցերը (ՀՏՀ), որոնք վերաբերում են ինսամքի շարունակելիությանը (Medi-Cal, 2014)՝

<http://www.dhcs.ca.gov/services/Pages/ContinuityofCareFAQ.aspx>:

Ինսամքի շարունակելիության համար, երբ Ձեր բժիշկը, բժշկական խումբը կամ հիվանդանոցը թույլ է տալիս այցելել MCP-ին՝

<https://www.dmhc.ca.gov/HealthCareinCalifornia/YourHealthCareRights/ContinuityofCare.aspx#.WBOqaY3FA3E>

Նահանգային կանոնադրությունը տեսնելու համար այցելեք՝

<http://leginfo.legislature.ca.gov/faces/codes.xhtml>

Նահանգային կանոնակարգ տեսնելու համար այցելեք այստեղ և սեղմեք այն տուփը, որտեղ գրված է «Կալիֆորնիայի օրենսգրքեր և կանոնակարգեր»՝ <http://www.oal.ca.gov/>

Եթե Դուք չեք կարողանում տեղեկություններ ստանալ որևէ հղմամբ, զանգահարեք Disability Rights California՝ 1 800 776-5746 հեռախոսահամարով՝ Ձեր ցանկալի տեղեկատվությունն ստանալու համար:

Էջ 16` 16-ից

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով(Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.